

Հ Ա Յ Ա Ձ Գ Ն

ԵՒ ԻՒՐ ԱՌ ՄԱՐԿԿՈՒԹԻՒՆ ԸՐԱՅ ԹԳՈՒՏՆԵՐՆ

(Տես Հտ. ԼԹ, 3.97, 199, — Խ, 3, 116):

ԳՂՈՒԽ Թ.

Հայ գաղարկանորեան երրորդ շրջան. — Անոր բանած գծերուն և բերացից եղանակը. — Աշխարհայինութիւնը, և ընկերական և քաղաքական և զինուորական ազդեցութիւնը հայ-ազգի գաղարկանորեանց. — ՉՀայտ հիշարկ-կարող աշխարհաց և ժողովրդոց նախնական սոցոսթիւն և այնուհետև իրան յանկարծական կառայախաղացութիւնը. — Եզրակացութիւնը:

Հայազգի նախնական ժամանակի գաղթականութիւնն, որուն վրայ Ա և Գ զլուխներուն մէջ խօսեցանք, որչափ որ յինքեան մտածելով մեծ կարևորութիւն ունեցաւ, սակայն չի կրնար համեմատուիլ վերջնոյն հետ, որուն վրայ գեա պիտի խօսինք. նախ որովհետև նա խապատմական ժամանակին և հեթա նոսութեան քիչ զարգացած ազգաց շրջանաց մէջ պատահեցան. երկրորդ, այն գաղթականութիւններն եկամուտ և կամ ներքին ըլլալով կրնանք առուակներու նմանեցնել, որոնք աւելի կամ պակաս տարածութիւն զօրաւոր կամ անզօր ազգեցութիւններ ունեցան և գուցէ միայն Հայաստան տախարհիս և մեր սեփական հողուն վրայ: Սակայն ուշի ուշով դիտելով Հայ ազգին հաղորդիչ, ծաւալական, և եթէ կը ներուի բնել, բազդախնդիր, յատկութիւնները, ոչ ճիշդ կրնար տարակուսիլ թէ Հայազգի նախապատմական և հեթանոս գաղթականութեան այդ առուակը՝ յետոյ պատմական ժամանակի մէջ, մանաւանդ քրիստոնէական թուականի Գ դարէն սկսեալ մինչև ցժի դար և այսր, հետզհետէ պիտի աճեր և յորդահոսան գետ պիտի դառնայր, քրիստոնէական կրօնից բեղմաւորութիւնը հետի միասին՝ ընդունելով յինքեան նաև

յետագայ գարուց քաղաքականութեան և արուեստից զօրութիւնները:

Քսանէն մինչև քսան և հինգ միլիոն ժողովրդեան գաղթականաց ընթացքն, որ բազմաւորութե և անբազմութեան հոսանքներէն մըլուած՝ ելաւ գրեթէ ամբողջապէս իւր ծննդեան և սննդեան երկրէն, և սկսաւ ծաւալիլ ՚ի սփիւռս ազգաց, որ և է դիւտէ, որ և իցէ գաղթականութեան ընթացքէն աւելի արդասարեք եղաւ մարդկային ընկերութեան, Ստոյգէ անոր ժամանակը, ստուգազոյն ևս գէթ ժմասմբ մի անոր արարուածոց պատմութիւնն: Առասիկ անոր գործերն և անոնց հետքերը շոյափելի կերպով կը տեսնուին գոգցես ամենուրեք, և ամեն պատմութենէ աւելի ազգու կերպով կը խօսին ամենուն սրտին և մտաց հետ: Յընթացս պատմութեան՝ քիչ անգամ կը հանդիպինք Հայազգի գաղթականութեանց չափ բազմակիւ և բարեկիրթ գաղթականութեանց, և եթէ հանդիպելու ալ ըլլանք, ինչպէս օրինակ իմն են Հիւքսուսք (քետացի կամ քանանացի հովիւներ), Սկիւքացիք, Թաքարք և Սյաւռնակալ ցեղեր, սակայն ստոնց ոչ մէկը կրցաւ տայն ընդարձակագոյն և օգտակարագոյն գերբ խաղալ զոր խաղաց Հայազգի գաղթականութիւնն օտար ազգաց մէջ:

Այս շրջանի Հայ գաղթականութիւնն յերիս առաջ կը բաժնուի: Առաջինը հիւսիսային արևելքէն կը կտրէ կ'անցնի զհարաւային արևելք և տարածուելով կը բռնէ ցԱֆրիկէ ձգուած Մեծին Ասիոյ երկիրները: Երկրորդ առաջը՝ հիւսիսային Հայաստանէն կը գիւմէ դէպ ՚ի Ղրիմ, կը հասնի թաթարստանի և Ռուսաստանի կեդրոնը, ապա Տոն և Տներեր գետափունքէն կը յա-

ուսմէ 'ի Ռուսներս, 'ի Բուլղարիա, 'ի Դրանսիականիս, և անտի շարունակելով իր ընթացքը՝ 'ի Լեհաստան կը տարածուի: Իսկ երրորդ առաջը՝ փոքուն Հայոց արևմտեան և հարաւային կողմերէն սկսելով՝ կ'անցնի 'ի Թրակիա, Միջերկրականի կղզիները, Նիպոոս, կրեւտէ, Հոռոքոս, և ուրիշ կղզիները գրաւելով, կը թեւակոխէ յիտալիա և յայլևայլ կողմանս արևմտեան աշխարհաց:

Յետ մատնանիշ տունելոյ հայազգի գաղթականութեանց գծերը, դարձընենք այսուհետև ուշադրութիւննիս ուղղակի անոնց ընթացիցն և գործունէութեան վրայ, և դիտենք անոնց ստորգ ժամանակն և պարագաները և աշխարհաշինութիւնը:

Հայ ժողովուրդէն, ինչպէս յիշեցինք Ձ գլխուն մէջ, արդէն Հայկազունեաց ժամանակէն և Արշակունեաց Հարստութեան առաջին օրերէն 'ի վեր սկսած էր գաղթիլ: Սակայն բազմաթիւ գաղթականութիւնն, որ հայ ազգաբնակութեան նուազելուն և սպառելուն սկըզբնապատճառ եղաւ, քրիստոնէութեանէն վերջը կը սկսի, կ'ըսէ պատմութիւնն, և կը տէէ մինչև ցայսօր, յօգուտ առանձինն օտար ազգութեանց, բայց 'ի մեծ վնաս Հայութեան: Տոհմային գիտնականներէն մին՝<sup>1</sup> այսպէս կը ջանայ պարզել այդ ժամանակի գաղթականութեան գաղտնիքը. « Չարմանալի և ուշադրութեան արժանաւոր բան. քանի որ Հայք բազմաստուածութեան կը ծառայէին, իրենց ծննդեան երկրի վրայ կապուած կը մնային, և անթիւ հրէայ, քանանացի, ասորեստանցի, հնդկաստանցի, չինացի, սկիւթացի և եղիպտացի, սագաստանցի և ուրիշ շատ գաղթականներ կ'ընդունին: Թէպէտ և վաճառականութեան կը պարսպին, սակայն պինդ կը մնան իրենց հայրենի հողին վրայ: Իսկ երբ քրիստոնէութիւնը կը հաստատուի Հայա-

ստանի մէջ անոր բնակչաց բարոյական վիճակն ևս զգալի կերպով կը փոխուի: Հայոց մինչև այն ժամանակ ուրիշ ալլասեռ ցեղերու դէմ<sup>2</sup> ունեցած ատելութիւնը, որ ամենայն անքաղաքակիրթ ազգաց բնաւորութիւն է՝ կ'անյայտանայ: Հայն կ'իմանայ քրիստոնէական եղբայրսիրութեան սկզբունքն և դիւրաւ աշխարհարմանակ կ'ըլլայ, շուտ մոռնալով իւր հայրենի երկիրն, և տւելի կ'ուզէ տարագիր ըլլալ անտի... միայն թէ կարող լինի ազատօրէն իւր նոր կրօնը և հաւատքը դաւանիլ և կեանքը պաշտպանել: Անտարակոյս մեծագոյն հայ գաղթականութեան սկիզբը քրիստոնէութեանէն վերջը և քրիստոնէութեան պատճառաւ եղաւ. այս ճշմարտութիւնս յայտնի է նաև 'ի պատմութեանէ: Բայց ենթադրելի թէ քրիստոնէական թուականէն առաջ հայ ազգը բնաւ գաղթած չէր յօտար աշխարհ, այլ պինդ մնացած միշտ իւր հայրենիքը, և թէ քրիստոնէութիւնը միայն զարգացուց Հայոց մէջ համաքաղաքացիութեան ուզին, և թուլացնելով անոնց հայրենասիրութիւնը՝ թեւադրեց թողուլ իրենց սեփական հայրենիքը, այս բանս մտածելով իբրև առաջին և միակ պատճառ, ոչ միայն պատմական հիմն չունի, և այլ գուցէ պատմութիւն ևս հակառակ: Դարձեալ ներկոյ ժամանակիս իսկոյ մի ազգունի այն մեծ համակրութիւնն ուրիշ ազգի մը հետ, քան ինչ որ ունեցաւ հայ ազգը Արշակունեաց ժամանակ Պարսից, Պարթևաց, Բակտրիացոց, Աղուանից և վրաց հետ: Իւր արդի բանասիրական քննադատութիւնը կը ցուցնէ թէ նախապատմական շրջաններուն մէջ ևս գաղթականութիւններ ունեցած է նա 'ի փոքր Ասիա և 'ի ֆոնիզիա, և անոնց հետ ազգախառնութեամբ ընդելացած էր հայ ազգն արդէն, երբ Հերոդոտոս և ուրիշ յոյն պատմագիրք սկսան անոնց վրայ խօսիլ և գրել:

1 Կ. Վ. Կահազարեան Պատմ. Հայոց, էջ 90:  
2 Անճիւռն է, մանաւանդ թէ պատմութիւնը աւելի անոնց ունեցած համակրութիւնը կը

ցուցնէ աւ իւր գրացի ազգէր, քան ատելութիւն:

Ուստի քրիստոնէական թուականէն վերջն եղող ընդարձակ և բազմաթիւ հայ գաղթականութիւնները՝ կրնանք ըսել թէ բոլորովին տարբեր, այսինքն քաղաքական և պատմական պատճառներէ յառաջ եկան, քան թէ ընդհանուր հղաբարոյական դժգոհութիւնքէ: Ըստ մեր կարծեաց, այն գաղթականութեանց և հետզհետէ Հայաստանի ամուլանալուն բուն պատճառները որոնելու ե՛նք, նախ, հայ ազգին վաճառաշահ և տարաշխարհիկ լինելու ընդհանուր և հնացեալ բնասորութեանը մէջ, երկրորդ, այն ազետալի կացութեանը մէջ՝ յորում ընկաւ մեր աշխարհն Սասանեանց պատմական և փառաւոր ասպարէզն երևնալէն յետոյ, և Արշակունի հարստութեանը տեղ Սասանականը փոխանակելուն պատճառաւ. երրորդ, Հայոց զքրիստոնէութիւնն ընդունելուն և անկէ առաջ երուանդայ ձևով ըրլ արևմտեան թագաւորութեան հետ սերտ վերաբերութիւն ունենալուն մէջ, Այս ամենամեծ յեղափոխութիւն, որուն վրայ նախ ընթաց գլուխներուն մէջ մեր ընթերցողաց ուշադրութիւնը դարձուցինք, երկու ազգաց շահուց հետ՝ քաղաքականութիւնը ևս բաժնեց իրարմ: Այս տեսութեամբ քրիստոնէութիւնն իբրև միջանկեալ և զօրաւոր պատճառ՝ խորտակեց այն բազմադարեան և ամենասերտ յարաբերութիւնը, որոնցմով հայ ազգը արիական ազգաց հետ միացեալ էր և հոգովէական աշխարհականութեան դէմ կը դնէր, և փոխանակ այնր զրգուեցաւ քաղաքական և կրօնական անհայտ ատելութիւն մը: Զանց ընելով ուրիշ պատճառները, կեզրականցրենք՝ թէ այս բոլորովին տարբեր հանգամանաց մէջ յանկարծական կերպով գտնուող Հայերն, երբ սաստիկ բռնութիւններ ևս կրեցին թէ կրօնական ըլլայ և թէ կենաց ապահովութեան մասին, հարկ էր այնուհետև դարձնել իրենց աչքերն և բոլոր ակնկալութիւնը (և իրզք ալ դարձուցին), հեթանոս Արևելքէն՝ քրիստոնեայ Արևմուտքի վրայ: Այսպէս ուրեմն այն

մեծ պատերազմն սկսաւ. Հայաստանի քրիստոնէութեան կամ քրիստոնեայ Արշակունեաց և Պարսկաստանի կրակապաշտութեան կամ Սասանական հարստութեան մէջ, որ ամբողջ դար մը տևեց (450-550), որուն մէջ թէպէտ և Հայք քաջութեան հրօշք գործեցին բայց ՚ի զուրի Արդարև չենք կրնար ըսել թէ Հայաստան մինչև ցերբ պիտի կըրնար երաշխաւորել զեւ իւր քաղաքական և ազգային զոյութիւնը, եթէ ՚ի սկիզբն դարուն զքրիստոնէութիւն եւս ընդունած չլինէր: Սակայն այս յայտնի է որ թէ այդ նոր կրօնքը մի և նոյն ժամանակ Պարսկաստանի մէջ մուտք և հաստատութիւն գտած ըլլար, իրաց ընթացքն այնուհետև բոլորովին ուրիշ կերպարանք պիտի առնէր: Հայ ազգի համար մեծ դժբաղդութիւն այս եղաւ, որ է յայտնուեցաւ իւր գրացի և արևնակից Պարսկաստանի մէջ ևս աւետարանի լոյսը տարածել, ինչպէս տարածեց հիւսիսային ժողովրդոց մէջ: Ուստի քրիստոնէութիւնը մէկ կողմէն բաժնեկող զՀայաստան ՚ի Պարսկից, և միւս կողմէն ալ Բիւզանդիոն իւր կրօնական վէճերու պատճառաւ զրկելով մեր աշխարհը իւր միակ դաշնակից վրացիներէ և Աղուաններէ, մինակ թողուց զՀայս իւր հզօր թշնամեաց մէջ, յորոց անհնարին նեղութիւններ քաշելով ստիպուեցան հետզհետէ թողուլ իրենց հայրենի երկիրն և ՚ի սփիւռս ազգաց տարծուիլ և ամրանալ:

Արևելեան ուղղութեան վրայ եղած հայ գաղթականութեան մասին կ'աւանդեն մեզ Ազգայնագետքն և խորենացի, թէ Սասանեանց առաջին թագաւորն Արտաշիր՝ Մեծին խոսքովու մահուանէն վերջն (260) Հայաստանի վրայ արշաւելով նուաճեց և բազմաթիւ գերիներ խաղացոյց ՚ի Պարսկաստան, երկիրը մշակելու համար, և նախարարաց մեծագոյն մասը հանեց Հայաստանէն: Սակայն անոր նախկին բռնութենէն աւելի՛ կարծուի թէ Հայաստանի տիրելէն ետև բռնած քաղաքականութեան խորամանկ և մեղմագոյն կերպը շատ

աւելի վնասեց Հայաստանի ամբողջութեանը: Վասն զի թէպէտ և նախարարներն և վտարանդեղոց մէկ մասն իրենց իշխանութեան մէջ վերահաստատեց, և զՀայաստան պարսկային պետութեան մարդ ընելով բարեկարգեց, բայց մնացած մասն եւս այնու խորասանկութեամբ իրեն որսալով 'ի Պարսկաստան գաղթել տուաւ<sup>1</sup>, հայրենի լեզուն մոռցրնել ջանաց և պարսկական կուսակցութիւնը զօրացուց: Արտաչրի Հայաստանէն տարած գաղթականաց վրայ թէպէտ և տոհմային մատենագիրք մեր մանրամասն տեղեկութիւններ չեն աւանդած, բայց կ'երևի թէ անոնք ամեն բանէ աւելի երկրագործութեան արուեստը զորգացնելու կը պարապէին, որուն համար տարւա զանոնք Պարսից թագաւորն: Հայք անտարակոյս, Պարսկաստանի ամայի կողմերու մշակութեան և աշխարհայինութեանցը մէջ մեծամեծ դեր խաղացին: Սասանեան ցեղի առաջին թագաւորի իմաստուն օրինակին հետևելով անոր յաջորդ թագաւորը ևս սկսան այնուհետև Հայաստանի վաստակատէր ժողովուրդը գաղթեցընել իրենց աշխարհին մէջ: Շապուհ Բ, ըստ վկայութեան փաւստոսի բուզանդացոյ և Մ. Խորենացոյ և Մ. Ամիրանոսի, կրկին և երեքկին արշաւելով Հայաստանի վրայ, 700,000էն աւելի Հայեր կը վարէ 'ի քաղաքացն Հայոց, որոնց ամենէն աւելի բազմամարդք էին Վաղարշապատ, Արտաշատ, Դուին, Վան, Արտաղերք և Նախիվան: Բուզանդացին<sup>2</sup> և Թովմաս Արժրունի կ'աւանդեն թէ միայն Վանայ և Արտաշատու գաղթելոց թիւը 73,000 ընտանեաց կը հասնէր:

Ինչպէս ծովու յետագայ ալիքներն աւանց խորտակելու գնախընթացս ա-

նոնց ընթացիցը նոր ուժ և երազութիւն կը յաւելուն ընդարձակուելու, այսպէս ալ 'ի դարու գաղթականաց եկաւորութեամբ կը տարածուի հոյ ժողովուրդը հեղուկ տարերաց նման Բակտրիացուց, Պարթևաց և Արեաց ընդարձակ մակարդակին վրայ:

Արտաչրի օրով Հայաստանէն տարազիր եղած Հայերն, որոնք ժամանակ վրայ անցած ըլլալով՝ լաւ ընդելացած էին պարսիկ տարերաց և անոնց համակրութիւնը յինքեանս գրաւած, համեմատութեամբ լաւագոյն դիրք մը ստացան այնուհետև: Յիրաւի, ճշմարտութեան հակառակ չէ ըսել թէ անոնք թողուցին հետզհետէ իրենց նախնական գերութեան նիւթակն և տնարգ համարուած դործերն՝ իրենցմէ վերջը եկող գաղթականաց, և իրենք պարսկային տէրութեան բարձրագոյն պաշտամանց և արուեստիցը հետամուտ եղան: Առ այս իբրև ստոյգ ապացոյց կը ներկայանայ մեզի Սիւնեաց տոհմի իշխանաց յաջորդութիւնը, որոնց հզօր ազդեցութիւնն ընդ երկար կը տևէր ապա Արեաց մէջ: Հայոց տարաբաղդութեան և արիական ազգի բաղաւորութեան այդ դարն եւս արտաբեր իւր շրջանն, և անոր յաջորդեց Ե դարը: Բ Յազկերտէն մինչև ցիտարով Բ, (գրեթէ մէկ և կէս դարու միջոց), Սասանեան թագաւորաց կրօնական և քաղաքական բռնութիւնքը, կ'ամայացընեն զհայրենի աշխարհս մեր: Հայ գաղթականաց խուռն բաղմութիւնք անընդհատ ելլելով իրենց ծննդեան տեղէն կ'երթան միանալու իրենց թշուառ հայրենակցացը հետ: Մաղանդարան, խորասան և ուրիշ ամայի տեղեր բազմաբնակ ընելու և յետագայ դարուց համար Արևմտեայց մեծագոյն ձեռնար-

<sup>1</sup> Յովհ. Կիշիկ' աւանդէ թէ Ջ զարուն վերջը Խորով Պարսից թագաւոր՝ Սմբատայ քաղութեան համար « այս նմա զմարդպանութիւն վրկանայ, իսկ Սմբատայ երթեալ յայն աշխարհ: զքառանէ անդ ազգս գերաւս 'ի Հայաստանեայց և բնակեալ 'ի Թուրքաստան կողմանէ մեծի անպաստին՝ որ Սադաստան անուանի, և զլեզու իւ-

րեանց մոռացեալ և գաղութիւնն աղեղալ յոյժ: Արոց տեսեալ զՍմբատ, յաւետ իմն խորս լինէին, և 'ի հրամանէ նորին դարձեալ աշակերտեալ՝ զլեզուն նորագէին և ուսեալ զգաղութիւն հայերէն՝ հաստատէին ի հաստատ:»  
<sup>2</sup> Իպ. Դ. Պշ ժ. Ե. էջ 68:

կուլթեանց ընդարձակ ասպարէզներ պատրաստելու :

Հայագրի գաղթականութեան ուրիշ շրջան մ'ես Արարացոց տիրապետութեան և ոստիկանաց ձեռքով և բռնաբարութեամբ կը սկսի: Ի դարուն 'ի Դուին նստող ոստիկանաց խմբութեանէն նեղուած՝ փորձ կը փորձեն Հալք խալիֆայութեան լուծը թօթափելու: Կը յարձակին Ապուսէթ ոստիկանի վրայ, կը սպաննեն և անոր զօրքը Հայաստանի սահմաններէն դուրս կը հալածեն: Այս աղիտալի դէպքը բաւական եղաւ բորբոքել ամիրապետին բարկութիւնն և հասցընել Հայաստանի վրայ նորանոր աղէտս: Յամին 850 դաշանաբարոյ ոստիկանն Քուզայ դրկուեցաւ անթիւ զօրք, որ աւեր և արիւնաթափեալ ընելով զՀայաստան, անոր իշխանները կալաւաւորած յուզարկեց 'ի Պաղտատ: Իսկ ինքն հինգ տարիի չափ մնալով Հայաստան, այնչափ անմեղ զոհեր և մարտիրոսներ ըրաւ, ըստ վկայութեան պատմագրի ուրումն, որուն չափ չկարողացաւ ընել Ներոն բռնոր իւր թագաւորութեան ժամանակ ամբողջ հռովմէական կայսրութեանը մէջ: Այս միջոցին եթէ աչքերնիս գարձընենք Դունայ, Նախիվկանու և վանայ և այլ բազմամարդ քաղաքաց վրայ, մեզի ուրիշ բան չեն ներկայացընէր, բայց միայն բազմաթիւ գաղթականաց անընդհատ կարաւաններ, որոնք բռնաբարուելով ամայի կը թողուն իրենց ծննդեան քաղցր բնակավայրքը, և կ'երթան յեղիպատոս, յԱրաբիա, 'ի Պաղեստին, յԱսորիս և յայլ տեղիս բազմամարդութեամբ լեցընելու համար: Մատթէոս Ուռհայեցին կը վկայէ՝ թէ ժԱ դարուն միայն եղիպատոսի գաղթական Հայոց թիւը 30,000էն աւելի էր: Անչուչտ Ատրեաց, Պաղեստինու և այլոց տեղեաց Հայ գաղթականաց թիւն ևս մեծ պիտի ըլլար, որովհետև Գրիգոր վկայասէր կաթողիկոսն հարկ հաճարեցաւ մի և նայն դարուն առանձին առանձին եպիսկոպոսութիւններ հաստատել այն աշխարհաց մէջ: Այս հոգեւո-

րական իշխանութեան հաստատութեանէն կ'երևի թէ Հայագրի գաղթականաց տարածութիւնն և աշխարհաշինութիւնքն մեծ եղած են արևելեան և հարաւային վերոյիշեալ ազգաբնակութեանց մէջ: Իւրաւընէ, յետ այնչափ անստուգութեան վերջապէս դարուս գիտութեան հետապօտող ձեռքը յաջողեցաւ 'ի լոյս բերել անոնց անցեալ արարուածոց հետքերն, և դարական խոր լուսութիւնն ընդհատելով հայ գաղթականաց պատմութեանը վրայ նոր լոյս ծագել: Արդարև վերջի տարիներս Ձիթենեաց լեբան վրայ գտնուած յիշատակարաններն բոլոր ուսումնական աշխարհի ուշադրութիւնը դարուեցին, որոնք են նախ գեղեցեկ ոճով հետաքրքրական միւսիոնակար սալայատակներ. երկրորդ, շքեղ գերեզմաններ, որոնք Հայկական վերաբաւութեամբ և պատմութեամբ լեցուած են. երրորդ՝ խաչանիշ կապարեայ տապաններ. չորրորդ, փոքրիկ և կաւեղէն կանթեղներ. հինգերորդ, ուրիշ զանազան մանր առարկաներ:

Այս նորագիւտ և պատուական յիշատակարաններուն գէթ մի մասն տարակոյս չկայ թէ քրիստոնէական թուականին է և ը դարուց Հայ գաղթականաց կը վերաբերին, որոնք յայտնապէս հայկական տառեր և խաչի նշաններ ևս կը կրեն յինքեանս: Իսկ այն կանթեղներն՝ որոնք ցարդ իրենց մէջ աճրիւնի մնացորդ կամ փոշի կը կրեն, և միւս մանր առարկաները, կարծուի թէ զեռ աւելի հնազոյն ժամանակի և հեթանոս ժողովրդեան մը գոյացութիւնը կը ցուցընեն այն կողմերը: Սակայն մենք ուրիշ փաստ մը ձեռքերնիս ունելով՝ կ'ըսենք թէ այն կանթեղներն ևս քրիստոնէոյ Հայ գաղթականաց կը պատկանին, որոնք Ե, Գ և թերևս Ա դարուն մէջ Հեղինէ թագուհւոյն, ինչպէս յետոյ յամին 354 կամաարականաց Արշաւիր առաջին իշխանին և ուրիշ աղետադարմ Հայ իշխաններու առաջնորդութեամբը եղևսիոյ կողմերէն դէպ 'ի յերուսաղէմ դալուծ գնացին և Բա-

տիև անուամբ վանք մ'ալ շինեցին։ Այս բանիս նախ կը վկայեն Ազատական գեղոս Անաստաս, Մ. Խորենացի և ուրիշ սոհմային մատենագիրքը, որոնք կ'աւանդեն թէ նախ Գրիգոր Լուսավորիչ և Մեծն Ներսէս և ապա կամարուական ոչ Համապայ՝ Զ դարուն յերուսաղէմ անօրինական տեղեաց ուխտի գնացած ժամանակ Երուսաղէմայ պատրիարքաց ձեռքէն հանեց Հայոց վանորայքը<sup>1</sup>, որոնք էին թուով 70, տալով կայսերն Յուստինիանոսի 70, 000 դահեկան։ Երկրորդ և Արչիպելզոսի կղզեաց մէջ հինաւորց գերեզմաններուն մէջ հեթանոս մեռեալները՝ ձեռքերին կանթեղ մը բռնած այնպէս թարուած են, որովհետև ըստ հեթանոսական սովորութեան, մեռելոյն ձեռքը ճրագ մը կը տրուէր, յախտենականութիւնն անգր անցնելու և անոր ստակալի խաւարը վարատելու նպատակաւ։ Հօս ևս նոյն կանթեղաց գոյութիւնն անժխտելի է, սակայն բոլորովին տարբեր նշանակաւ, որովհետև աստ ճրագարանը և կամ կանթեղները՝ մեռելոց աւրնթեր փողոց մէջ դետեղուած են, ըստ քրիստոնէական սովորութեան ցուցնելու համար՝ թէ վախճանեցող հօն, այսինքն գերեզմանին մէջ թողուց իւր մահկանացութեան աղօտ և անօղուտ լոյսը՝ յախտենական պայծառ լուսոյն մէջ բանալով իւր աչքերը։

Այս գաղթականութեան նպատակն, որուն համար վերնախնամ տեսչութիւնն առաւ զհայ ազգն և ցրուեց այն հեռավոր ախարհաց և անհաւատից մէջ, էր ազագոյ տարածումն քրիստոնէութեան և զարգացումն վաճառականութեան և արուեստից արևմտեան քրիստոնէից և որքան երախտագէտ պէտք է լինի առ այս՝ իրատանայ Արևմուտքը Հայաստանի։ Յիբրաի, քանիցս կը կարգանք խաչակրաց պատմութիւնն և անոնց մեծամեծ անյաջողութիւններն, աստի

և անտի կը տեսնենք ընդ հակառակն այն ժամանակի արևմտեան վաճառականութեան անակնկալ յառաջխաղացութիւնըը յԱսորիս, յԱրաբիս, ՚ի Պարսկաստան, ՚ի Պաղեստին, յԵգիպտոս և մինչև ՚ի Հնդկաստան. կը զարմանանք և դժուարախնդիր հանդոց մ'ընդ առաջ կ'ենք։ Սակայն բոլոր այս դժուարութիւնը այն պատճառաւ գիմայնիս կը ներկայանայ, որովհետև Արևմտեայց քրիստոնէայ ազգաբնակութիւնը միայն կը մտածենք, և անոր պատերազմական ձախողութիւնըը վաճառականական յաջողութեանց հետ չենք կրնար միաբանել Արևելքի հեթանոս ազգաբնակութեանց ասպարիզին մէջ։ Արդ վայրկեան մը մտածենք այդ հեթանոս ազգաբնակութեանց մէջ ուրիշ աղէկ հաղորդիչ, արևելցի և քրիստոսազաւան ժողովրդեան մը, այսինքն հայ գաղթականաց կանխիկ և մեծամասն գոյութիւնը, որոնք կարող էին իրենց բարեմասնութիւններով ոչ միայն զքրիստոնէայ այլ և զհեթանոս Արևելքը՝ քրիստոսակրօն Արևմուտքի հետ կապել։ Այնուհետև կը տեսնենք թէ այն երկու հակառակամարտ գործերը իրարու հետ լաւ կը միանան, և լոկ Արևմտեայ խաչակրաց անհաստատ պատերազմաց և յաղթանակաց արգասիք չեն տեսնուիր, այլ և մասամբ մի հայ գաղթականաց և վաճառականաց դասուն, որոնք ըստ վկայութեան Մարգոյ Բողոյի, Ֆրոգարինի, Գանեստրինեայ և այլոց ճանապարհորդաց, այն ժամանակէն շատ առաջ տարածուելով այն ախարհաց մէջ՝ իրենց նեղութիւններովն ամենայն ինչ արդէն պատրաստած էին, մեծ համբու ստացած էին և ամեն վտճառատեղիները բռնելով, պատրաստ էին Արևմտեան իրենց կրօնակից եղբարցն ևս հրաւէրը կարգալու և ձեռք կարկառելու։ Եւ իրօք երբ լատինք և կիլիկեցիք այն երկիրներու

<sup>1</sup> Հայ վանորէից անուանքն և տեղիքը համառօտ պատմութեամբ հանգերմ կրնան ուսումնասիրք գտնել նոր սպագրեալ Բագմովէպ

Հանգիստարանին մէջ, Առաջ վանորէից որ ՚ի սորբ Կաթն Երեստեմէ, յամին 1882, Պրակ Ա, էջ 23։

մէջ մուտ և ելք դտան, այն ժամա-  
նակին տեղաբնակ Հայերն ոչ միայն իր-  
քն ստոյգ և բարգաւաճ գաղթականք,  
անդէն և անդ. ձեռնուու եղան իրենց  
համադրի եղարացը, այլ ջերմ համա-  
կրութիւն ցուցին նաև իրենց քրիստո-  
նեայ եղբարց, ամեն օգնութիւն ըրին  
անոնց, ինչ որ կրնան ընել ազգի մը՝  
անոր համազգի գաղթականներն այն-  
պիսի պարագայից մէջ:

Պատմութիւնը կ'աւանդէ թէ Շահ  
Աբաս ուզելով թրքաց արչաւանացը  
դէմ դնել յԱտրպատական, այսպիսի  
վնասակար գործի մը ձեռք գարկաւ,  
երասխական արդաստարեր հովիտը ան-  
մարդի անապատ դարձնելով: Յա-  
մին 1604, Երևան, Նախիջևան, Օր-  
տուպատ, Ագուլիս և Զուղա Հայաստա-  
նի բազմաբնակ քաղաքներն ՚ի հուր կը  
դատին հանդերձ անթիւ գեղերով և  
աւաններով. և երասխական հովտի  
հացաւետ և որթաւետ այգիներն, խո-  
տաւէտ մարգագետիններն և բոլոր այն  
վայրաց բժշկական բուսաբերութիւն-  
քը՝ զորս հոչակաւոր քերթողքն ան-  
գամ Հռովմայեցոց և Յունաց յաճախ  
երգեցին, անապատի փերութիւն զգե-  
ցան, և 25,000, հայ ընտանիք ստիպե-  
ցան թողուլ իրենց բնակավայրն և եր-  
թալ բազմացընել զՍպահան, Շիրազ,  
Համաստան, Լարիստան և Աֆղանիս-  
տան: Ինչպէս յայտնի է փորձով, ամեն  
անգամ նոր գաղթականներ հասնելուն  
պէս, հնոց բարոյական, քաղաքական  
և նիւթական վիճակը կը փոխուէր, և  
անոնց ազգեցութիւնն անդրապայտ  
բաժնելու պատճառ կ'ըլլար: Այսպէս  
ուրեմն անցան Հայք կամ յԱֆղանիս-  
տանէն և կամ ՚ի Պարսկային ծոցէն՝  
յարևմտահողմն Հնդկաստանի, և անտի  
յառաջ խաղացին դէպ ՚ի Չինաստան,  
յարբունիս անգր Մոնղոլաց: Սակայն  
յայտնի չէ դեռ՝ թէ արդեօք այն աշ-  
խարհաց անբաւ հարստութիւններէն  
հրապուրեալ, եթէ մեծ խաներու խընդ-  
բանօք անցան հոն: Այս ամենաստոյգ

է՛ թէ դեռ Անգղիացիք Հնդկաստանի  
մէջ ոտք չկոխած՝ Հայք բռնած էին այն  
երկրի զանազան կողմերը: Մոնղոլ իշ-  
խանաց հրովարտականքով և արտօնու-  
թեամբք պաշտպանուած՝ վաճառակա-  
նութեան և ուրիշ բարի դործոց կը  
պարտապէին, և անոնց ազգեցութիւնը  
քան գշտին իսկ անցաւ տեղացի աղ-  
գաբնակութեանը վրայ: Հայ վաճա-  
ռականաց կամ գաղթականներու կեդ-  
րոնատեղիքն՝ ըստ վկայութեան Բաս-  
լէտի, էին Սուրազ, Մատրաս, Կակա-  
դա, Չիչրա առ Հուզլի դետով և Սէդա-  
պադ:

Հայոց ՚ի Հնդկաստան գաղթելուն  
ճիշտ ժամանակը պատմական հաւաս-  
տեաւ դեռ բոլորովին սպացուցուած  
չէ: Սակայն այս յայտնի է՝ թէ նոր Զուղա-  
յէն անցան ՚ի Հնդկիկ և նախնաբար  
հօն թողուցին իրենց մեծութեան հետ,  
քերբը Հնդկաց Ազգարթագաւորին ժա-  
մանակ շատ Հայք կը բնակէին նաև յար-  
բունիս Մոնղոլաց: Երբ 1615ին թով-  
մաս Հռովեան Անգղիոյ Յակովբ թագա-  
ւորին հրամանաւ զրկուեցաւ Տելհեայ  
արբունիքը, հայազգի նշանաւոր վա-  
ճառականք արդէն իսկ գրաւած էին այն  
տէրութեան համակրութիւնը: Ըստ վը-  
կայութեան տոհմայնոյ ուրումն, որուն  
յօդուածը տպագրուած է ՚ի Վենետիկ՝  
այժմ կը գտնուին ՚ի վաղեմի գերեզմա-  
նատան ուրեք Ալբրա քաղաքի՝ Հայոց  
չիրիմներ, որոնց արձանագրութիւն  
ներէն կը տեսնուի թէ մեզմէ երեք  
դար կանուխ են ժամանակաւ: Արևե-  
լեան Հնդկաց ընկերութեան հրովար-  
տակէն գատնելով, զոր հրատարակեց  
Բասլէտ ՚ի Լոնտրա յամին 1782 իւր մէկ  
երկասիրութեանը <sup>2</sup> մէջ, կը տեսնուի  
թէ Հայք հաւասարապէս մասն ունէին  
այդ ընկերութեան գործոց և նպաստի-  
ցը մէջ. և իբրև ազատ ազգ լիակատար  
արտօնութիւն ունէին երթեկեկութիւն-  
ներ ընել ՚ի Հնդիկս այն ընկերութեան  
նաւերով: Գարձնալկարող էին առանց  
խտրութեան մուտ և ել առնել յամն.

1 Բազմ. Հանդ. Գ Պրակ 1880, էջ 240:

2 Տես. Հնդկային երաց հա. Գ:

նայն դաւառս, բնակութիւն հաստա-  
տել ամենայն քաղաքաց և պահակա-  
պանաց մէջ, զնել և վաճառել զտունն  
և զչարթական իրս. երանել ՚ի բարձս  
աւագութեանն արքունեաց. աղատօրէն  
կրնային նաւարկել հարաւային ծովե-  
րու մէջ ՚ի Չինու մային և ՚ի Մանիլայայս  
Այս հրովարտակիս մէջ կը տեսնուի  
հայազգի Բենիամին նախարարին, Յեսու  
փոխանակ-նախարարին և երեք ուրիշ  
արքունի անձանց ստորագրութիւնն  
ևս, որ իրօք ըսածնիս կը հաստատէ :  
Ուրիշ հրովարտակ մ՛կս կը ցուցընէ թէ  
Հայք ոչ միայն կրօնից լիազօր ազա-  
տութիւններ ունէին ՚ի Հնդիկս, այլ և  
կը ստանային ընդարձակ կալուածներ  
՚ի շինութիւն եկեղեցեաց, և Անգղիա-  
ցոց հաւասար նախամանութեանց ի-  
րաւունքներ ունէին : Պլասեայ պատե-  
րազմէն 40 տարի առաջ, որ զԱնգղիա-  
ցիս տէր ըրաւ Պենկալայի, Հայք էին  
բարձեւեց ՚ի Հնդիկս և յինքնակալու-  
թեան Մողղաց : Խաչէ Աերհանգ Հայ-  
ազգի մեծահամբաւ վաճառականին  
Յովհաննէս Սուրնամանգղիացոյն հետ  
իբրև պատուիրակ Տելնեայ արքունիք  
երթալն նշան է թէ Հայք ճոխութեամբ  
և պատուով մեծագօրք էին այն ժամա-  
նակ ՚ի Պենկալայ և Անգղիացոց և Հընդ-  
կաց հաւասարապէս պատկառելի :  
Անգղիացի պատմագրին Բալսէտի ուշ  
զննիք առ այս . « Հայք, կ'ըսէ նա, ո-  
րոնք միշտ անուանի վաճառականներ  
եղան ՚ի Հնդիկս, երկայն ժամանակ  
Պենկալայի մէջ բազմաթիւ բնակու-  
թիւններ և կալուածներ ունեցան, մա-  
նաւանդ ՚ի Սեղարտս : Անոնց վաճա-  
ռականութիւնն ապահով կ'ընթանար  
Մողղաց հրովարտակներով : Անոնց  
երկու նշանաւոր վաճառուցը միայն,  
այսինքն կտաւի և ալպրմի 3 1/2 % սակ  
կը արուէր : Ի վերջ կոյս ժև գարուն  
և ՚ի սկիզբն ժիփին՝ Հայք ամենէն աւե-  
լի մեծապատիւ, ընչաւէտ և բարեկե-  
ցիկ ժողովուրդն էին ՚ի Մատրաս : Ըստ  
վկայութեան պատմագրի ուրումն զոր  
յիւնցինք, անոնց պալատները շքեղ և  
պայծառագոյն էին քան զամենեցուն ՚ի

քաղաքին, բազմազուարճ ամարանոց-  
ներ ունէին :  
Հայք ՚ի տար աշխարհի տնտեսական  
և վաճառականական փառաւորութեան  
մէջ եղած ժամանակ, հաստիարակու-  
թեան և գիտութեան հաւասարապէս  
հոգ տարին, կ'ըսէ պատմութիւնն Հընդ-  
կաստան ուր մարդկութիւնը կէս վայրե-  
նութեան մէջ ինկած էր և ոչ ոք կը մը-  
տածէր զդաստիարակութիւնն արտի և  
մտաւորական զարգացման մասին, Հայք  
եղան անոնց բարեբարքն, որոնք ամեն  
ազգէ, յառաջ բացին կրթարաններ, ճե-  
մարաններ և տպարաններ, գրքեր և լրա-  
գիրներ ևս հրատարակեցին, յօգուտ գա-  
ւառականաց : Անմահ են ՚ի մէջ այլոց  
նաև անուանք Ռափայելի, Մուշաթի,  
Մովսէս Առաքելեանի, Յ. Արզաւրեանի,  
Յար. Գալուցեանի, Ա. Մուշատ խանի,  
Շամիր Շահրիմանեանի և Նազարե-  
թի : Այսպէս ՚ի Պենկալայ, ՚ի Տագգա և  
այլուր Հայոց գաղթականութեան և  
աշխարհաշինութեց յաղթական հետ-  
քերը զեռ կը տեսնուին այսօր : Չիբա-  
յի եկեղեցին, որ յամին 1695ին շի-  
նուեցաւ, կ'ըսուի թէ հնագոյնն է ՚ի մէջ  
տանալուց քրիստոնէից : Կալիաթա քա-  
ղաքին մէկ թաղը, ուր 70էն մինչև 80  
տուն Հայք կային, մինչև ցայսօր իսկ  
Հայոց թաղ կը կոչուի : Հօն տակաւին  
կանգուն կայ Ս. Նազարէթ անունով  
Հայոց մեծ եկեղեցին իբր անջնջելի ար-  
ձան աշխարհաշինութեան և բարեպաշ-  
տութեան ջուղայեցի խօճա Նազարէթի  
Մօսր կառուցեալ է գեղեցիկ զան-  
գակատուն մը, որուն ճակատը զարդա-  
րած է իայելի Առաքելեանի Եւրոպա-  
յէն բերել տուած երգեցիկ ժամացոյցն,  
որ անցեալ Հայութեան փառաւորու-  
թեան ժամանակները կը հնչեցընէ :  
Պարսպի մէջ կայ նոյն բարերարին ծա-  
խիւքը քահանայից համար յօրինած  
կրկնայարկ տունն . իսկ պարսպէն դուրս  
կայ ուրիշ մի կրկնայարկ մեծ շինու-  
թիւն մը բազմաթիւ կրպակներով, զոր  
շինեց Ապտիւլբսահ : Անդ կայ մի քարա-  
յէն բաղանիք որ մի անանուի հարու-  
տէ կտակած եկեղեցւոյ սեփականու-

թիւնն է: փոքր ինչ 'ի բացէ կը բարձրանայ մի հոյակապ շէնք, որուն ճակտին վրայ գրուած է մեծամեծ տառերով Հիւրանոց Հայոց: Այս դարաւոր հիւրանոցիս մէջ այսօր իսկ պանդոստ չայք իրաւունք ունին ձրի բնակիչ երէք ամնոյ չափ: Բաց աստի անդ է Մարգարիտական ճեմարանն Հայոց հանդերձ տպարանով:

Անցնինք 'ի Մարդաս, որ վեշտասաներորդ դարու եղաւ հանդիսարան հայ ազգաբնակութեան: Հօն կը տեսնուին Հայոց դպրոց, տպարան, հիւրանոց, հիւանդանոցն և աղքատանոց. դուցէ ամենքն ալ արժանայիշատակ Շամիր արզալի վեհանձն մարդասիրութեան արդիւնք: Հօն դէմաւ դէմ կը բարձրանայ և գոգչեռ կը մրցի ուրիշ հայազգու մը, կ'ուզեմ ըսել Պետրոս Ոսկանեանի շինել տուած Ս. Աստուածածնայ փառաւոր տաճարը, ըստ աւանդութեան՝ թովմաս առաքելոյն նահատակուած տեղը: Նոյնը կ'ըսուի թէ 26,000 առփի ևս ձգեց ուսումնարան մը հաստատելու նոր Զուղայի մէջ. որուն օրինակին հետեցեալ տպարանին 1833ին Սէթ Սամ Շամիր, 20,000 առփի կտակելով:

Ակնարկ մը տանք Պոմպոյի վրայ: Հօս է Ս. Պետրոս մեծաշէն եկեղեցին, և հինաւուրջ տպարան: Նշանաւոր են յամին 1652 յԱզրա կառուցեալ եկեղեցին և փառաւոր գերեզմանատունն:

Ուստի այն ժամանակէն մինչև ցայսօր Հնդկաստանի բաց 'ի նշանաւոր վաճառականներէն՝ ելին նոյնպէս կաճառք բարձրաստիճան քաղաքավարաց, երևելի բանասիրաց, օրէնսդիտաց, փաստաբանից և բժշկաց: Անոնց մէջ յաւէտ յիշատակաց արժանի են Յով. Ալալեան, Մեկրովթ Գաւրեան կամ Թողիսդեան, Պոլոս Յովնանէն կամ Էմիլեան, Սէթ Յար. Արզարեան, որ էրնախկին օտտիկան Անգղիացոց աստեղին և Պարսից Սագաորէն Շիրախոյիդ պատուանիսն և արժանաւոր:

Ս. Մոնղոլաց և Անգղիացոց տէրութիւնն Հայոց մատուցած ծառայու-

թիւններն և տիրասիրութիւնքն ևս մեծ եղան: Յամին 1756 Մուրջա Դովլա երիտասարդ իշխանը յաջողեցով Ալիվերդի խանին՝ որ իբր կուսակալ իշխած էր Պենկալայի, Բեհարայ և Որիսայ, Անգղիացոց դէմ պատերազմ բացաւ, յարձակեցաւ կալիպթայի վրայ և առաւ: Այն տաղանապալից ժամանաբոմանք յԱնգղիացոց խանին ձեռքն ինկան, և այլք գետամոյն եղան. և ուրիշ շատեր ալ նաւով փախչելով՝ ապաւինեցան 'ի փոլիս Պատմութիւնն կ'ըսէ թէ երբ այն թշուառականաց կենաց պարէնը հասաւ և անտանելի նեղութեան և մահուան ձեռքը կը վարանէին, օգնութեան հասաւ անոնց Պետրոս Յարութեան մարդասէր հայ վաճառականն և նաւակներով կերակուր հասցընելով՝ զանոնք փրկեց: Զմեծանուն Հայազգիս կը յիշէ նաև Որմէս իւր Հնդկաց պատմութեանը մէջ, մեծ և կարևոր առաքելութեան մ'առթիւ. « Անգղիացոց Գիլէ իշխանին ժամանակ, կ'ըսէ, հայազգին Պետրոս ընտրուեցաւ պաշտօնեայ հաւատարիմ Միհրգոփարայ և Ոմիշնդայ հետ խօսելու համար, որպէս զի համոզէ զանոնք զՈւրալա Դովլա խանը իւր իշխանութենէն վար ձգելու, որ էր ռխերիմ Անգղիացոց: Եւ իբրց յաջողեցաւ այն առաքելութեանը մէջ, և 'ի մարտին Պլասեայ Անգղիացիք տէր եղան այնուհետև այն երկրին կալիպթեան լրագրաց խմբագիրը կ'աւանդէ՝ թէ երբ Գէորգ Գ թագաւորին բժշկութեան լուրը հասաւ անդ, հայազգի սիկին մը 1000 շուրի բաժնել տուաւ պարտապանաց. խաչիկ Առաքելեան հայ հարուստ վաճառական մ'ալ իւր գանձով (3000 առփի տալով) 16 պարտապաններ բանտէն ազատեց: Այս խաչիկը կ'երևի թէ բաց աստի ուրիշ մեծախոհութեան և տիրասիրութեան հանդէսներ ևս ցուցած էր, որով այնչափ մեծարեցաւ յարքայէն, որ մինչև իւր մանրանկար կենդանադիրն և մեծամեծին սուր մը պարգեւեց իրեն: Գրիգոր Յարութիւնեան, որուն անունն անմահ է 'ի Հնդիկա՝ Գորգին խան ա-

նուամբ, այս եզական անձս որ 'ի սկզբ-  
բան Մուրջիգարատայ տէրութեանը մէջ  
բնակելով իւր գաւառակցաց հետ վա-  
ճառականութեան կը պարապէր, Մի-  
հրդասիմ իշխանին ժամանակ եղաւ  
պալատական և անոր զօրաց հրամանա-  
տար: Հնդկային իրաց հմուտն Մարշ-  
ման, իւր պատմութեան Ա Պրակին  
մէջ լաւ կը նկարագրէ այն տէրութեան  
նախկին յետամնացութիւնը և յետոյ  
հայազգի Գորգի խանին և Միհրդա-  
սիմայ ջանիք եղած յառաջխաղացու-  
թիւնը: Անոր նշանաւոր գործերը միայն  
մէջ բերենք աստ: Ես 'ի սկզբան պարզ  
վաճառական մ'էր Հուզլի գետին վրայ,  
բայց երբ այն բարձրագոյն պաշտօնն  
ըստանձնեց, անդէն և անդ երկուս ա-  
նոր ընդարայ հանճարն և ամենահը-  
նար ճարտարութիւնը: Երեք տարուան  
մէջ 15,000 հեծելազօր կազմեց և  
25,000 հետևակ Անգղիացւոց զինուո-  
րական օրինոք կրթուած: Գարբնոցներ  
կանգնեց, մեծամեծ հրանօթներ ձու-  
լելու համար: Հեղինակը կը յաւելու  
թէ անգղիականներէն աւելի լաւագոյն  
հրազէնք կազմեց, և այնպէս մարզեց  
հրազինանձիգ զօրքերն, մինչև կրնային  
պանծալ Անգղիացւոց վաշտերուն առ-  
ջն: Եւ կ'ըսուի թէ Միհրդասիմ անգամ  
մը գնա գովելու առթիւ՝ այսպէս ըսած  
ըլլայ, թէ « Հայազգի հրամանատա-  
րին ձեռքով քան զԱլիվերտի խանը զօ-  
րաւոր ըլլալու համար քանի մը խաղաղ  
տարիներու կը կարօտէր »: Յակոյբ  
Պետրոսեան հանճարեղ հայ զինուորա-  
կան մ'ևս Գուալբայ իշխանին Մահա-  
րաջայի ժամանակ կը յիշուի. որ նոյն-  
պէս իւր յաջողակութեամբ զօրավա-  
րութեան աստիճանին հասաւ: Պատ-  
մութիւնն կ'աւանդէ, թէ ուրիշ շատ  
բարձրաստիճան հայեր ալ կը զինուո-  
րէին անոր ձեռքի տակ:

Հայ ազգի գաղթականներն 'ի սկզբ-  
բն ժիժ դարուս տարածուեցան զեռ  
անդրազգոյն արևելեան Ասիոյ հարա-  
ւակողման կղզեաց մէջ, որոնք մեզի ծա-

նօթ են, յԱրևելեան Հնդկիս Ներլանդաց  
կամ Հոլանտացւոց, և մասնաւորապէս  
'ի Ճաւա. Բադախա, Սամարանգ և  
Սուրաբայա ծովեզերեայ և բազմա-  
վաճառ քաղաքներն նոր թատր եղան  
հայազգի մեծազունձ վաճառականաց  
և անոնք մեծամեծ հանդիսից: Գետրգ  
Մակուկեան, որ վախճանեցաւ յամին  
1827, երկու հարիւր բիւր գլխոք դրա-  
մակչոյ թողուց: Իւր հարստութեան  
համար իբրև հայ ոմն կրասոս հռչա-  
կուած էր նա Ճաւայի մէջ. և կ'ըսուի  
թէ Ռոյլիտի նման երբեմն մեծամեծ  
գումարներ տէրութեան փոխ տուած  
էր: Մի և նոյն ժամանակ փայլեցաւ 'ի  
Սամարանգ ուրիշ Ջուղայեցի հայ վա-  
ճառական մ'ալ Յովս. Յովնան և Լեւան  
Ամիրխան անուամբ: Ասոր մասին կ'ա-  
ւանդուի թէ յամին 1825 Ճաւացւոց  
ապստամբած ժամանակ երբ Հոլանտա-  
ցւոց զօրքն գնաց 'ի միջնախարհ անդր  
զանոնք նուաճելու համար, այս մեծա-  
տուն հայազգիս իւր ծախիւք եօթն օր  
կերակրեց ամբողջ բանակը: Այս մեծ  
ապստամբութեան ժամանակ Հոլան-  
տացւոց զօրութիւնն բեկաւ 'ի Ճաւա,  
և քրիստոնէից վերջն հասած էր: Գաղ-  
թականք անգամ որ ըստ օրինի տէրու-  
թեան ոյսպիսի հարկի ժամանակ պէտք  
էին զէնք առնուլ, արքունի զօրաց դան-  
դադանաց ժամանակ գունդեր կազմելով  
դիմագրաւեցին յասպարէզ անդր մու-  
նախանձ մարտին: Այս հեծելազօր գնդե-  
րուն մէջ շատ Հայեր ևս կային, որոնցմէ  
Յակոյբ Մարտիրոսեան, Խայիկ Երա-  
տուրեան և Տէր Մարգարեան մեռան  
դիւցադնական քաշութի իրենց քրիստո-  
նեայ եղբարց վրայ: Բաց աստի հայ գաղ-  
թականներն կանգնեցին նաև 'ի Ճաւա  
զանազան կարգի ուսումնարաններ, եկե-  
ղեցիներ, և թողին 'ի սիրտս ժողովրդեան  
և 'ի տարեզիրս ազգաց՝ ուրիշ մարդասի-  
րական գործոց արձաններ, և աշխար-  
հաչէն և վաճառաշահ ժողովրդեան մը  
հեծաբերն:

Կը շարունակուի.